ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 13/546

«18» 07 2024 թ.

«Էյչ Գրուպ» ՍՊԸ
(ՀՎՀՀ 01254973)
ՀՀ ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30
էլ. հասցե՝ eychgroup@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ կարիքների համար պարեկային մոտորանավակների ձեռքբերման նպատակով 14.07.2023 թվականին կնքվել է ՀՀ ՆԳՆ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՆԱՎԱԿ/2023/Հ-54 ծածկագրով պայմանագիր «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) հետ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա: 25.09.2023 թվականին կնքվել է ՀՀ ՆԳՆ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՆԱՎԱԿ/2023/Հ-54 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) թիվ 1 համաձայնագիրը՝ համաձայն որի Վաճառողը համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20 օր հետո 90 օրվա ընթացքում պետք է մատակարարի պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան թվով 2 /երկու/ պարեկային մոտորանավակներ (ԳՄԱ կոդ 34511100/504): «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ ՆԳՆ ստացվել է գրություն,

Վաճառողը Պայմանագրի 8.6 կետի համաձայն ցանկություն է հայտնել երկարաձգել ապրանքի մատակարարման ժամկետը 30 օրացուցային օրով: 04.01.2024 թվականին ՀՀ ՆԳՆ և «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության միջև կնքվել է թիվ 2 համաձայնագիրը, համաձայն որի ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով: Համաձայն 04.01.2024 թվականին կնքված թիվ 2 համաձայնագրի «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ապրանքների մատակարարման վերջնաժամկետը ստացվում էր 12.02.2024 թվականը ներառյալ:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Վաճառողը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետը և Պայմանագրի 6.2-րդ կետը ՝Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Հարկ է նշել նաև, որ Վաճառողի կողմից տվյալ Պայմանագրի շրջանակում ներկայացվել է ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ կողմից 22.09.2023 թվականին թողարկված թիվ 23-0432 պայմանագրի և թիվ 23-0433 որակավորման ապահովումները՝ բանկային երաշխիքի տեսքով: Պայմանագրի թիվ 2 համաձայնագրին կից Վաճառողի կողմից 29.12.2023 թվականին ներկայացվել են նաև պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքների երկարաձգումն հավաստող թիվ 5184/10/5 և 5185/10/5 փաստաթղթերը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման կարգի 32-րդ կետի 26-րդ ենթակետի ՝ եթե ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրերը կնքվում են օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա առկա ֆինանսական հատկացումների շրջանակում տվյալ

տարվա համար կնքված համաձայնագրի (համաձայնագրերի) մասով ներկայացված որակավորման ապահովումը ենթակա է վերադարձման այդ համաձայնագիրը (համաձայնագրերը) կատարողի կողմից ողջ ծավալով պատշաճ կատարվելու և դրա արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու դեպքում: Հետագայում կատարողի կողմից պայմանագիրը չկատարելու հետևանքով միակողմանի լուծվելու դեպքում վերջինիցս գանձվում է պայմանագրի չկատարված մասի համար ներկայացված որակավորման ապահովումն ամբողջությամբ: ՀՀ ՆԳՆ կողմից «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության ներկայացված բանկային երաշխիքները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ երաշխիքով սահմանված գումարներ՝ 37 000 000 / երեսունյոթ միլիոն / ՀՀ դրամ պայմանագրի ապահովման և 111 000 000 /հարյուր տասնմեկ միլիոն/ ՀՀ դրամ որակավորման ապահովման գումարները ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N900008000664 և N900008000698 հաշվեհամարներին փոխանցելու նպատակով:

Հավելենք, որ Վաճառողի կողմից ուշացված 107 աշխատանքային օրերի համար հաշվարկվելու է տույժ չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, այն է 1 աշխատանքային օրվա համար 185 000 (հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ, ընդհանուր 19 795 000 (տասնինը միլիոն յոթ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ: «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությանը տրվում է 10/տաս/ օրացուցային օր սահմանված տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով: Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը ապրանքների մատակարարումը ուշացրել է 4 ամսից ավել, կարծում ենք ավելի ողջամիտ ժամկետ Պատվիրատուն այլևս իրավասու չէ տրամադրել մատակարարման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ ՆԳՆ Պայմանագիրը միակողմանի լուծում է համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

<< 19 >> 07 2024թ.

ք.Երևան

Կատարող՝ Հ. Ասատրյան
Հեռ. 010-59-66-32